

թիւնը եղած է Հայոց, Յունաց, Ասորոց և Մարօնիթներու: 1710 թուականին ասդին երբ Կաթողիկոսութիւնը պաշտօնապէս ճանչցուեցաւ Հալէպի մէջ և Հայոց, Յունաց և Ասորոց մէկ մասը յարած մնաց Կաթողիկոսեան, այս նոր հասարակութիւններն ալ իրենց ննջեցեալները շարունակեցին թաղել միեւնոյն գերեզմանատանց մէջ, առանց սակայն անջատ թաղամասեր նշանակելու Կաթողիկ մեռեալներու համար, և այլ կերպ ալ կարելի չէր, վասնզի այդ թուականներուն Կաթողիկոսեան յարողներ բնական է որ թաղուէին իրենց ծնողաց չիրմներուն առընդեր, ինչպէս որ եղաւ: Սեպհականութեան այս ձեւը անցաւ նաև Կաթողիկ Հայոց, Կաթողիկ Յունաց և Ասորոց, ինչպէս նաև Քաղզէացիներու և Հայ, օտար և Արար Բողոքականներու:

Ազիլիյէի Լատինաց արդի գերեզմանատունը 1710էն վերջ սեպհականութիւնը եղաւ Շպէնիի Լատինաց եկեղեցւոյն. ան գնուած էր Հայոց, Յունաց, Ասորոց և Մարօնիթներու հասարակաց բաժինէն, ինչ որ ցայտուն ապացոյց է որ քրիստոնէից արդի Գերեզմանատուները կը պատկանէին միայն յիշեալ չորս հասարակութեանց: Լատինաց գերեզմանատան հիւս. կողմը այս տարի հիմը զըրուեցաւ ընդարձակ չէնքերու, եկեղեցի, զպրոց, վանատուն եւ այլն. որովհետև ներսի քաղաքի հեռուորութիւնը լուրջ արգելք մըն էր Ազիլիյէ և յարակից թաղերու աշակերտութեան մինչև Շպէնի, Terre - Sainte վարժարանը յաճախելու: Երանի թէ այդ թուականներուն ընդհանուր գերեզմանատունը բաժնուած ըլլար վերոգրեալ չորս համայնքներու, առանձին առանձին չըջապատով, հոգ չէ թէ անոնցմէ բաժնուած Կաթողիկ նոր հասարակութիւններ շարունակէին իրենց մեռեալները ամփոփելու հիներու կողքին:

1927 Փետր.ին Հալէպի Քաղաքապետութիւնը, առողջապահական պատճառներով փակեց քաղաքամիջի այս գերեզմանատունը, և քաղաքէն զուրս՝ միշտ հիւս. արեւմտեան կողմը, երկաթուղ-

ւոյ գծէն անդին, Շէյխ Մագսուտի մէջ տրամադրեց ընդարձակ արտեր, և իւրաքայլեր քրիստոնեայ հասարակութիւն, ինչպէս նաև Հրէայք, վճարեցին իրենց ինկած բաժինը:

Ազիլիյէի քրիստոնէից գերեզմանատունը, իր երեք անջատ մասերով կը գտնուի Թիլէլէն Համիտիյէ երկարող հանրակառքի պողոտային ձախ եղերքը, Rue Millerand: Ան, իր ընդարձակ տարածութեան վրայ, ունի շատ արտեր երեւոյթ մը: Քաղաքին արեւելեան կողմէն Հալէպ մտնող ճամբորդը, կը նըշմարէ ընդարձակ աւերակոյտ մը, քառակուսի և տարածուն անձև քարերու, որոնց տակ, չորս հարիւր տարիներէ ի վեր կը հանդէն քրիստոնեայ և հրեայ մեռեալներ, և որոնց միջև, սակայն, հայերէն տապանաքարերը ունին առանձնապատուկ նկարագիր մը: Ո՛չ մէկ ծառ, ո՛չ մէկ դալար, ո՛չ մէկ ածու, ո՛չ մէկ գեղեցկութիւն այս անհրապոյր բացատանին մէջ: Բայց անիկա կը ներկայացնէ մ'զ, Հայերուս համար, բացառիկ հրապոյր մը, անանց գեղեցկութիւն մը, քերթուած մը նոյնիսկ, զի ան պատմութիւնն է ցարդ չգրուած Հալէպի անցեալ կեանքին, որ ԺՋ. րդ դարու վերջերէն սկսեալ մինչև այժմ տակաւին, ունի իր որոշ նշանակութիւնը: Կ. Պոլսոյ Պալլըզլըն է ան, գէթ ինծի համար, որ դարերէ ի վեր, միեւնոյն հորիզոնական դիրքով, երևանին գէպի ծագող արեւուն, իր մէջ է ամփոփեր խնկիլի մարմինները բոլոր այն բնիկ ու մանաւանդ եկեւոր Հայերուն, որոնք Մերձաւոր Արեւելքի այս միակ մեծ շահաստանին իրենց նպաստը բերին, անոր պարգեւելով, մանաւանդ մեր Ազգին տեսակէտով, ուշադրաւորէն փայլուն ու ծաղկեալ վիճակ մը, որ թէև շատ երկար շտեւեց, բայց անմահացուց Հալէպի փոքրաթիւ Հայ գաղութին անունը Սուրիոյ շահեկան պատմութեան մէջ: «Արեւելցի» Հայ վաճառականներ, որոնք թանկագին ծառայութիւններ մատուցին այս պատմական ուստանին, դարերէ ի վեր լուս կը հանդէն Ազիլիյէի Ազգ.